

# ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ, ճԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ  
ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԱՊԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, ԼԻԼԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

21-րդ դարում մարդկության խաղաղ ապրելակերպին ուղղված բազմաթիվ սպառնալիքների, վտանգների կանխարգելման ու դրանց չեղոքացման անհրաժեշտությունը փրկարարական տարբեր բնույթի աշխատանքներ իրականացնող անձնակազմներից պահանջում է բազմակողմանի ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածություն: Այդ իսկ պատճառով շատ բնագավառներում (ավիացիոն, տիեզերական, մարզական և այլն) գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվում է մասնագետների ֆիզիկական, հոգեբանական, կենսաբանական ընտրություն: Արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմների ընտրության, ինչպես նաև դրանց համալրման գործընթացը բավականին լուրջ պահանջներ է առաջադրում մասնագետներին: Հատկապես փրկարարական գործունեության բնագավառներում հոգեբանական ընտրությունը անձի օրգանիզմի գործառության հնարավորությունների բացահայտման և հետագա աշխատանքներում դրանց խիստ հաշվառման գործընթաց է: Մյուս կողմից՝ արտակարգ իրավիճակների բնագավառը կիսառազմական օրենքներով գործող փոխարարերությունների դաշտ ունեցող ասպարեզ է: Այստեղ փրկարարի կողմից դրսևորվող ինքնուրույնությունը, գործողություններում ազատ որոշումների ընդունումը, դեպքերի զարգացման ընթացքի վերահսկողությունը պահանջում են անձնական նախաձեռնողություն, կաղապարներից դուրս գործելու հնարավորություն: Այստեղ յուրաքանչյուր հապաղում, վրիհպում կամ սխալ հետագայում դառնում է մեծ կորուստների պատճառ: Այդ իսկ նպատակով ընտրության միջոցով այստեղ ընդգրկվող մարդիկ իրենց մտածելակերպով ու գործնական հմտություններով խիստ տարբերվում են մնացած բնագավառների մասնագետներից:

Հոգեբանական ընտրությունը Ս. Ի. Սամիգինան բնորոշում է որպես արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում յուրաքանչյուր պահի անթերի գործելու պատրաստ, բազմակողմանի հնարավորություններով օժուված հոգեֆիզիոլոգիական բարձրակարգ նախադրյալներ ունեցող անձանց բացահայտում ու հավաքագրում<sup>1</sup>:

Հոգեբանական ընտրությունը ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական, քաղաքական, ռազմական իրադարձությունների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքով ստեղծված դժվար պայմաններում ավելի քան արդիական է:

<sup>1</sup> Տե՛ս Սամյինա Ս. Ի. Շկола выживания. Ростов-на-Дону, 1996, էջ 71:

Ընտրության գործընթացը արտացոլում է այն բոլոր պահանջների հաշվառման ամբողջությունը, որոնք բնորոշ են արտակարգ և ճգնաժամային իրավիճակների բնագավառներին: Այդ իսկ պատճառով հույժ կարևոր է գործունեության բնագավառի հոգեբանական առանձնահատկությունների ու բնութագրերի ճանաչումը, որը հնարավորություն կտա բոլոր ուղղություններով բարեհաջող իրականացնել կազմակերպչական և կանխարգելման, ինչպես նաև փրկարարական գործողություններին ուղղված ծրագրերը:

Արտակարգ, ճգնաժամային իրավիճակները մարդու սովորական ապրելակերպից խիստ տարբերվող այնպիսի իրավիճակներ են, կենսագործունեության այնպիսի պայմաններ, որոնցում մշտապես վտանգվում են անձի ամբողջականության պահպանման հոգեֆիզիոգիական գործընթացները, նորմալ ապրելակերպը: Դրանցում բացահայտ կամ քողարկված ձևով գոյություն ունեն բազմաթիվ պակասություններ, անհարմարություններ ու դժվարություններ: Հատկապես քաղաքացիական բնակչության շրջանում այդպիսի պայմանները դառնում են ապրելու համար անբարենպաստ, այդ պատճառով նման դեպքերում անհրաժեշտություն են դառնում մարդկանց զանգվածային տարիանումները: Արտակարգ իրավիճակների առանձնահատկություններից մեկն էլ հոգեբանական մեծ լարվածությունն է, որը պայմանավորված է վտանգավոր պայմանների, հավանական սպառնալիքների գոյությամբ (պայթյուններ, թունավորման վտանգ, երկրաշարժ, սողանք, մարդկանց առևանգում և այլն):

Արտակարգ իրավիճակներին բնորոշ են նաև բնական կամ արհեստական ճանապարհով ստեղծված այնպիսի պայմանները, որոնց դեպքում անձի կենսագործունեության պահպանումը, դրանցում ցանկացած գործունեության կազմակերպումը տեղի են ունենում ի վեհական օրգանիզմի գործառությային հնարավորությունների:

Մյուս կողմից՝ արտակարգ գործուների, սթրենների, սպառնալիքների տևական ազդեցության պատճառով աղետի, վրարի գոտում տարբեր պատճառներով հայտնված մարդկանց օրգանիզմի տարբեր համակարգերում տեղի են ունենում խորքային և կառուցվածքային լուրջ փոփոխություններ: Դրանց հետևանքով մարդիկ կորցնում են իրենց կողմնորոշվելու, արդյունավետ գործողություններ իրականացնելու հնարավորությունները, հուզական վիճակները կարգավորելու, ճշգրիտ որոշումներ կայացնելու ունակությունները: Տևական ժամանակամիջոցում մարդկանց արտակարգ իրավիճակներում գոյատելը, առավել և ակտիվ գործունեություն ծավալելը դառնում են օրգանիզմի հյուծնան պատճառ: Ինչպես ցույց է տալիս բազմաթիվ հետազոտությունների արդյունքների վերլուծությունը, արտակարգ պայմաններում կենսագործունեության պահպանման ցածր դրդապատճառների առկայությունը, դրական դիրքորոշումների, համոզմունքների բացակայությունը հանգեցնում են մարդկանց զգուշավորության, անվստահության, կոնֆլիկտայնության, հոռետեսության<sup>2</sup>: Համատարած պակասությունների ու անհարմարությունների պատճառով մարդկանց մեջ առաջա-

<sup>2</sup> Տե՛ս Ա. Պ. Մկրտումյան, Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները, Եր., 2008, էջ 117:

նում են խուճապի, հոգեբանական և ֆիզիկական փախուստի տրամադրություններ: Մարդկանց զանգվածային լարվածությունը հաճախ առաջ է բերում բողոքի, ցաման ալիք, որը երեմն դառնում է անկառավարելի:

Արտակարգ իրավիճակների առանձնահատկություններից մեկն էլ դրանցում գործող անձանց նյարդային բարձր լարվածությունն է, որն ուղեկցվում է տագնապի, վախի, բարձր հուզական լարվածության, սթրեսի, ֆրուստրացիայի և այլ ձևերով: Դրանք գրականության մեջ առանձնացվում են որպես հետվնասվածքային սթրեսային խանգարումներ (ՀՍԽ) <sup>3</sup>:

Այդ իսկ պատճառով արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմներից պահանջվում է մեծ զսպվածություն, կամային ջանքերի մոբիլիզացում, սթրես-գործոնների նկատմամբ արգելքադիմացկունություն, բացասական հոգեվիճակների ինքնակարգավորման բարձր հնարավորություններ: Արտակարգ իրավիճակներում դեպքերի արագ զարգացումները անձից պահանջում են անվիեպ գործողությունների կատարման հմտություններ, կամային ջանքերի մոբիլիզացման և պահեստային հնարավորությունների արդյունավետ օգտագործման կարողություններ:

Ընդհանրապես մարդկանց մեջ բնական ընտրությունը նպատակառուղղված, պլանավորված գործընթաց է, որի հիմքում ընկած են անձի առաջնային և հոգևոր պահանջնունքները, դրանց բավարարման ձևերը: Դոգեբանական ընտրության գործընթացը սկսվում է աշխատանքների պլանավորման փուլից: Պլանավորումը թերևս մարդկային գիտակցության ամենաբարդ և կարևոր գործառույթներից մեկն է, որում իր փորձի հիման վրա անձը նախատեսում է առաջիկա գործողությունների իրականացման հնարավորինս բոլոր մանրամասնությունները<sup>4</sup>: Դոգեբանական ընտրության գործընթացի պլանավորման մեջ ներառվում են մի շարք կարևոր բաղադրամասեր:

ա) գործունեության ներ բնագավառի (փրկարարական, հակաահաբեկչական, հրշեջ, շտապ օգնություն, լեռնամագլցում և այլն) յուրահատկությունների ուսումնասիրումը և դրանց հաշվառումը: Այդ նպատակով կիրառվում են պրոֆեսիոնալ դրանք, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ բացահայտելու տվյալ բնագավառի կամ մասնագիտության բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները (բժշկի, վարորդի, ջրափրկարարի, հրշեջի և այլն), առաջնային մասնագիտական հմտությունների ձևավորման ժագումը և այլն:

բ) հետազոտական ապարատի ձևավորում, որում ընդգրկվում են ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող բարձրակարգ մասնագետներ (ախտորոշողներ, մանկավարժներ, հոգեբաններ, տարիքային, սեռային առանձնահատկություններն ուսումնասիրող տարրեր մասնագիտության բժիշկներ, կինեզոոլոգներ): Որպես հետազոտության միջոցներ՝ նրանց գինանցում պետք է ներառվեն անձի հոգեկան ոլորտի տարրեր մակարդակների գործունեության առանձնահատկությունները որոշող թեստեր, ժամանակակից սարքավորումներ, վերականգնողական տեխնոլոգիաներ:

Ընտրության գործընթացի հոգեբանական մյուս կարևորագույն բաղադրամասը փրկարարական գործունեության ժավալման նպատակով ի-

<sup>3</sup> Ст. Малкина-Пых И. Г. Экстремальные ситуации. М., 2005, № 136:

<sup>4</sup> Ст. Коток М. А. Психология и безопасность. Таллин, 1981, № 264:

րական մոդելների առաջադրումն է՝ ուղղված անձի գործառությախն հնարավորությունների բացահայտմանը: Վերջինս հոգեբանական ընտրության գործընթացի կազմակերպման ամենակարևոր օլակն է:

Ընտրության գործընթացի բովանդակությունը բխում է ինչպես բուն գործունեության պահանջներից, այնպես էլ ընտրական գործընթացի արդյունավետ կազմակերպման տրամաբանությունից: Դրանում հաշվառվում են ընտրական գործընթացի արդյունավետության ապահովման, ինչպես նաև ընտրվող անձնակազմի անձնային-անհատական առանձնահատկությունների հետ կապված հնարավոր բոլոր հանգամանքները՝ ներառելով.

1. մասնագիտության առանձնահատկությունների պահանջները ներկայացնող պրոֆեսիոնալամայի կառուցումը, որտեղ արտացոլվում են մասնագիտության հոգեբանական առանձնահատուկ որակների առաջնայնության և երկրորդայնության տեղերն ու դերերը: Բացի այդ՝ դրանում պետք է արտացոլվեն մասնագիտական հմտություններին նպաստող որակները, արտակարգ իրավիճակներում պահանջարկ ներկայացնող առանձնահատկությունները (ստեղծագործականություն, ստեղծարարություն, մտքի թռիչք, ուշադրության կենտրոնացվածություն, հոգեկան աշխատունակություն, արգելքադիմացկունություն):

2. Մասնագետների հոգեբանական դիմանկարի կառուցում, որը հնարավորություն է տալիս օբյեկտիվ կերպով համեմատել պրոֆեսիոնալայում տեղ գտած մասնագիտական ունակությունները, պարզել դրանց համապատասխանելիությունը տվյալ մասնագիտության պահանջներին:

Ընտրական գործընթացում կարևոր տեղ են զբաղեցնում ընտրակազմի անհատական անամնեզտիկ տվյալները, կյանքի կարևոր եղելությունների պատմությունները, ընտրական գործընթացին մասնակցելու նրա դրդապատճառները: Դրանցում ներառվում են անձի տարիքը, քաշ-հասակային պարամետրերը, սեռը, կրթությունը, մասնագիտությունը, ընտանեկան դրությունը: Յաշվի են առնվում նաև օրգանիզմի բոլոր համակարգերի վերաբերյալ տեղեկություններն ու չափումների արդյունքները: Չափումների ժամանակ կարևորվում են նաև ընտրակազմի ֆիզիկական հնարավորությունները բնութագրող պարամետրերը, որոնք արտահայտվում են ուժի, արագության, ժամանակի, տարածության զգացումներով և այլ չափանիշներով: Դրանք՝ որպես կայուն չափորոշիչներ, հաստատված են մասնագիտական ընտրության ծերնարկներում, ուղեցույցներում՝ որպես անձի հնարավորությունների տարրեր կողմերը բնութագրող պահանջներ<sup>5</sup>:

3. Զգայաշարժական հնարավորությունների, մասնագիտական ըմբռնումների (ջրի, արագության, բարձրության, ծածկի, մթության, ցնցումների, հավասարակշռության և այլն), կոգնիտիվ գործընթացների (ուշադրության, հիշողության առանձնահատկություններ, սահմաններ, արագ որոշումներ կայացնելու հնարավորություններ, մասնագիտական մտածողություն, գործողությունների նկատմամբ պատկերացումներ, հավանական փոփոխությունները կամխատեսելու հնարավորություններ և այլն), անհատական առանձնահատկությունների (բնավորության գծեր, խառնվածք և ընդունակությունների տիպեր, հատուկ ընդունակությունների տեսակներ) ուսումնասիրում և այլն:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Ա. Լալայան, Պրոֆեսիալայի ընտրության հիմունքներ, Եր., 1983, էջ 120:

Ընտրական գործընթացի պահանջներից մեկն էլ վերաբերում է այն առավելագույնս բնական պայմաններում կազմակերպելուն: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է չափումների գործընթացը կազմակերպել հենց արտակարգ իրավիճակների մոդելավորման պայմաններում: Այդ դեպքում ընտրված համակազմի հնարավորությունների ստուգումը անհամեմատ արդյունավետ է լինում: «Իրական գործողությունների կատարման սահմաններում տեղի ունեցող գործընթացները անհամեմատ իրատեսական են, գործնականորեն փորձարկված, իսկ արդյունավետության տեսանկյունից՝ հեռանկարային»<sup>6</sup>:

Ընտրության հիմնական փուլը պետք է հաջորդի փրկարարական բուն գործողություններուն ընտրակազմի փորձնական մասնակցությանը: Դա պայմանավորված է այն համարմանքով, որ մասնակցի համար մոդելավորված կամ բնական պայմաններում ռիսկի, վտանգի ու սպառնալիքի առկայությունը փոխում է անձի ինքնուրույն և խմբային համագործակցության հնարավորությունները: Այստեղ ստեղծված յուրաքանչյուր իրավիճակ (թեկուզ և մոդելավորված) մասնագետից պահանջում է արագ և ճշշտ վճիռների կայացում, ինքնատիրապետում, իրադարձությունների վերահսկողություն, հավանական փոփոխությունների կանխատեսում, կրահում (անտիցիպացիա), սրբես-գործնների նկատմամբ կայունություն, բարձր աշխատունակության և հուսալիության դրսերում և այլն: Հատկապես վթարային, չնախատեսված, արտակարգ իրավիճակներն են, որ կարող են լիարժեքորեն բացահայտել անձի համապատասխանելիությունը տվյալ մասնագիտությանը:

Հոգեբանական ընտրության հաջորդ կարևորագույն փուլը խնդերի, թիմերի, անձնակազմի համալրումն է, որը, բացի ընտրակազմի ֆիզիկական, հոգեբանական, կենսաբանական տվյալների հաշվառումից, գնահատվում է նաև գործողությունների կատարման ճշգրտությամբ, ինչպես նաև թիմում դրսերած հոգեբանական համատեղելիության ցուցանիշներով: Սա թերևս հոգեբանական ընտրության, ինչպես նաև խնդերի համալրման կարևորագույն պահանջներից մեկն է, քանզի արտակարգ իրավիճակներում անձնակազմից պահանջվում է արդյունավետ համագործակցում, հանդուրժողականություն և փոխադարձ օգնություն, գործողություններում առաջացած խափանունների, ստացված վնասվածքների դեպքում փոխադարձ փոխարինելիություն և այլն:

Աշխատանքների իրականացման հաջորդ փուլը հետազոտվող համակազմի թիմում ընդգրկվելու դրդապատճառների վերստուգումն է: Արդյունքները համեմատվում են սկզբնական չափումներից ստացված տվյալների հետ: Գաղտնիք չէ, որ գործազրկության պայմաններուն անձի առաջնային դրդապատճառներից մեկը դառնում է թիմում ընդգրկվելը: Սակայն նույնիսկ ստուգողական վարժություններում հոգեբանական թեսատվորման ժամանակ բարձր արդյունքների ցուցադրումը դեռևս բավարար չէ օբյեկտիվ ընտրության համար: Հետազոտություններն ու փորձը ցույց են տալիս, որ միայն բուն գործողություններում ընտրության համալիր միջոցների կիրառմամբ ընտրակազմի ցուցաբերած բարձր արդյունքները կարող են արդյունավետ ընտրության կայուն հիմք լինել<sup>7</sup>: Փրկարարական աշխատանքներում հատ-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>7</sup> Տե՛ս Ս. Պ. Մկրտչումյան, նշվ. աշխ., էջ 82:

կապես ամձնակազմերի սրբեսածին գերլարվածության պայմաններում կատարվող առաջադրանքների մեջ հաճախականությունն ու հոգեբանավերականգնողական աշխատանքների բացակայությունը հանգեցնում են փրկարարների հոգեբանական ջլատվածության, որը գրականության մեջ հայտնի է «կոնտեյների էֆեկտ» անվանումով<sup>8</sup>:

Ուժեղ, կարողունակ մասնագետների հոգեբանական ընտրության տեսանկյունից ուշադրություն է դարձվում ընտրակազմի անհատական տիպաբանական առանձնահատկություններին, նրանց նյարդային համակարգի գործունեության յուրահատկություններին: Ուժեղ տիպերը օժտված են բարձր արգելքադիմացկունությամբ, անբարենպաստ պայմաններին արագ հարմարվելու և դրանցում արդյունավետ գործելու հնարավորություններով: Նրանց մոտ հոգեբանական փոխհատուցման մեխանիզմները բարձր մակարդակ ունեն, այդ իսկ պատճառով նրանց օրգանիզմի ինքնակարգավորման հնարավորություններն ել բավականին բարձր են: Դետևապես, «կոնտեյների էֆեկտի» առաջացման հավանականությունը այս դեպքում փոքրանում է:

Ժամանակակից զարգացած երկրներում հավանական սպառնալիքների (ահարեկչական գործողություններ, հրդեհներ, հեղեղներ և այլն), վտանգների կանխարգելման համար ստեղծվում են տարբեր նշանակության արագ արձագանքման փրկարարական ջոկատներ, որոնցում ընդգրկվում են վերականգնողական աշխատանքներ իրականացնող հոգեբաններ: Այդ երկրներում (ճապոնիա, ԱՄՆ, ՌԴ, իսրայել և այլն) ժամանակի ընթացքում մշակվել են հատուկ տեխնոլոգիաներ ինչպես հոգեբանի մասնագիտության զարգացման, այնպես էլ դրանցում գործող մասնագետների ուսուցման, վերապատրաստման ուղղությամբ: Լուրջ աշխատանքներ են տարբեր մարդկային ռեսուրսների նախապատրաստման, փոխարինող սերնդի համալրման և բազում այլ ուղղություններով:

ՀՀ վերջին տարիների սոցիալ-տնտեսական փոփոխությունները մարդկանց մեջ նոր վերաբերնունք ձևավորեցին մասնագիտությունների նկատմամբ: Հանդես եկան առաջնայնություն ունեցող և պակաս հեղինակություն վայելող մասնագիտություններ: Անշուշտ, դա պայմանավորված էր բարձր եկամուտներ, հասարակության մեջ հեղինակություն ունենալու ցանկությամբ, հեռանկարայնությամբ, երիտասարդների՝ ինքնահաստատվելու ձգտումով: Հասարակության անցումային փուլում հաճախ տեղի են ունենում ժամանակավոր գործնքացներ, որոնք այսպես թե այնպես իրենց կմիջն են թողնում հատկապես երիտասարդների պատկերացումների, աշխարհայացի ու գիտակցության նպատակառուղյամբ զարգացման վրա:

Այս առումով հատկապես պատամիների և երիտասարդների շրջանում կարևոր է մասնագիտությունների առանձնահատկությունների, դրանց հեռանկարի վերաբերյալ հստակ պատկերացումներ ձևավորելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը:

Ըստ Ա. Ա. Լալայանի՝ հատկապես մասնագիտական ընտրության հարցում անձը ուղղորդվում է իր առաջնային մտադրություններով, որոնք սոցիալ-տնտեսական հիմնավորում ունեն: «Կյանքում հաճախ է պատահում, -

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 175:

գրում է նա, - որ պրոֆեսիոնալ մտադրությունը վերաբերում է պրոֆեսիայի գայթակղության աստիճանին: Այսպիսի դեպքերում գրեթե միշտ ընտրությունը սխալ է կամ ժամանակավոր: Կարևոր է, որ բացի հիմնական պրոֆեսիոնալ մտադրության մասին ունեցած պատկերացումներից, պատանին կամ երիտասարդը ունենա նաև ռեզերվային պրոֆեսիոնալ մտադրություն: Ռեզերվային է կոչվում այն պրոֆեսիոնալ մտադրությունը, որը պետք է իրագործվի այն ժամանակ, երբ հիմնական պրոֆեսիոնալ մտադրությունը ինչ-ինչ պատճառներով չի իրագործվում»<sup>9</sup>: Այնուհետև հեղինակն ավելացնում է. «Ռեզերվային պրոֆեսիոնալ մտադրությունը կարևոր է մի քանի առումներով: Նախ, որ ընտրության գործընթացում նպատակին չհասնելու դեպքում այն թերևացնում է անձի հնարավոր հոգեկան ցնցումները և հետո՝ հնարավորություն է ընձեռում զերծ մնալու ավելորդ պատահականություններից, որոնց համար նա կարող է զղջալ»<sup>10</sup>: Հետագա քայլը հեղինակը համարում է գործունեության տվյալ բնագավառում որոշակի հաջողությունների հասնելը, որը պայմանավորված է անձի հնարավորություններով:

Մասնագիտության ընտրության դրդապատճառների վերաբերյալ Ա. Պ. Սոլովյովը գրում է. «Անձի կողմից մասնագիտության ընտրությունը ունի երկու կարևոր կողմ: Առաջինը նրա գրավիչ ու գայթակղիչ լինելը է, որը անհամեմատ սոցիալ-հոգեբանական, հոլովական հիմնավորում ունի, երկրորդը՝ հիմնական կողմը, ֆիզիկական և մտավոր մեծ ճիգերի գործադրման անհարժեշտությունն է, որին բոլորը չեն, որ պատրաստ են: Բացի այդ, կա նաև անձի և պրոֆեսիայի պահանջների միջև անհամաձայնություն»<sup>11</sup>:

Արտակարգ, ճգնաժամային իրավիճակների բնագավառները մասնագիտության ընտրության հարցում կոնկրետ պահանջներ են առաջադրում անձի նկատմամբ, այդ իսկ պատճառով դրա արդյունավետությունը ապահովելու համար պահանջվում է մի շարք առանձնահատկությունների հաշվառում:

1. Ընտրության գործընթացի կազմակերպում՝ ըստ գործունեության բնագավառի, որում հաշվառվում են անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

2. Նրա հետաքրքրությունների, առաջնային դրդապատճառների նշանակալիությունը, մասնագիտության նկատմամբ սոցիալ-հոգեբանական դիրքորոշումները:

3. Հաշվի առնել հատուկ ընդունակությունները, օժտվածությունը, մասնագիտության պահանջներին համապատասխանելիության, հնտությունների հղկվածության աստիճանը:

4. Առողջական վիճակը (ընդհանուր և հոգեկան առողջության համապատասխանելիությունը գործունեության բնագավառին): Կան մասնագիտություններ, որոնցում ընդգծված է վլանգի, ռիսկի առկայությունը: Նման պայմաններում գործունեության կազմակերպումը պահանջում է առողջական բարձր մակարդակ:

5. Սոցիալական միջավայրի կարծրատիպերը, որոնք ժամանակի ընթացքում մարդուն թելադրում են ընտրել հասարակության կողմից հարգանք վայելող այս կամ այն մասնագիտությունը:

<sup>9</sup> Ա. Ա. Լալայան, նշվ. աշխ., էջ 30:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Соловьев А. П. Правила выбора профессии. Л., 1995, с. 73.

6. Պրոֆեսիայի տարբերակված բնույթը՝ ըստ սեռերի, ըստ հոգեկան, ֆիզիկական, կենսաբանական հնարավորությունների:

Այսպիսով, անփոփելով հոգեբանական ընտրության գործընթացին առաջադրվող պահանջները, հանգում ենք այն եզրակացության, որ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել արտակարգ իրավիճակներում գործող անձնակազմերի ընտրության գործընթացի կազմակերպման բովանդակությանը, որում ներառվում են հետևյալ պահանջները:

- Ընտրության գործընթացը պետք է ունենա գիտական պլանավորում: Այն պետք է հագեցած լինի ժամանակակից տեխնոլոգիաների, սարքավորումների բազմազանությամբ:

- Ընտրության գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնվեն գործունեության բնագավառի, ինչպես նաև ընտրակազմի անհատական, հոգեբանական, ֆիզիկական առանձնահատկությունները:

- Մասնագիտական ընտրության ժամանակ նախապատվությունը պետք է տրվի արտակարգ իրավիճակների մոդելավորված և բնական պայմաններում ընտրակազմի ցուցաբերած արդյունքներին: Թիմերի համալրման ժամանակ պետք է հաշվի առնվեն անձնակազմի անդամների հոգեֆիզիոլոգիական բոլոր չափումները ու դրանց համատեղելիության հնարավորությունները:

- Մասնագիտական կողմնորոշման հարցերը պետք է ուղղված լինեն ոչ միայն առանձին մասնագիտությունների հոգեբանական առանձնահատկությունների ճանաչմանը, և մասնագիտության՝ անձին առաջադրած պահանջներին, այլև հաշվի առնվեն անձի ընդունակությունների, օրգանիզմի գործառությին հանրավորությունների զարգացածության աստիճանը, նյարդային գործընթացների առանձնահատկությունները:

**МЕЛЬС МКРТУМЯН, ЛИЛИТ МКРТУМЯН – Особенности психологического отбора личного состава, действующего в экстремальных и кризисных ситуациях.** – В мире ежедневно случаются большие и малые катастрофы природного и антропогенного характера: террористические акты, эпидемии, пожары и т.д. При обеспечении нормальной жизнедеятельности и спасении людей, оказавшихся в зоне катастрофы, важную роль играет психологический отбор действующего в экстремальных условиях личного состава.

В статье анализируются психологические особенности людей, работающих в экстремальных условиях, а также научно-практические требования, предъявляемые к их отбору. Подробно разбирается специфика профессии спасателей и психологические факторы, повышающие результативность их труда. Раскрываются основанные на многолетних исследованиях и личном опыте автора социально-психологические механизмы отбора спасателей. Рассматриваются психофизиологические предпосылки организма и личностные характеристики молодых людей, избирающих эту профессию.

**MELS MKRTUMYAN, LILIT MKRTUMYAN – The Peculiarities of the Psychological Screening of Personnel Operating in Extreme and Crisis Situations.** – In the 21st century against the backdrop of the people's peaceful life there are natural and anthropogenic large and small disasters every day: acts of terrorism, epidemics,

fires, etc. To ensure normal life and to rescue people caught in the disaster, acquires particularly important issue of psychological screening of personnel operating in extreme conditions.

The psychological characteristics of work in extreme conditions are discussed in the article, as well as scientific and practical requirements for the process of psychological selection of rescuers. There is the detailed description of the specifics of the lifeguard's profession and psychological characteristics to improve outcomes of their activity in severe conditions in the article.

Based on years of research and personal experience, the authors present the socio-psychological mechanisms of selection of professional lifeguards as well as psycho-physiological conditions of the body and personality characteristics of young people who prefer the specialty of lifeguard.